

Ռուսիոյ մէջ արդէն բուշուրիկեան յեղա-
փոխութիւնը փոխած է նախկին վիճակը. ոչ
թէ որովհետեւ հրէաները երջանիկ են այնտեղ,
այլ նախկին խորական օրէնքներու ջնջմամբ
հրէաներն ալ հաւասար չափով մասնակից են
ընդհանուր քշուստութեան: Ըստ հրէայ բու-
շուրիկներու՝ Երբորդ Միջազգայնականն ար-
դէն մարզարէներու քարոզած մեսիական դարն
է եւ Լենինն ալ մարզկութեան մեսիան էր փո-
խանակ միայն Իսրայէլի համար եկած ըլլա-
լու:

Հեռատես հրէաներ սարսուռով կը խորհին
սակայն Ռուսիոյ իրենց հայրենակիցներու վի-
ճակին վրայ, եթէ օր մը բուշուրիզմը տապալի
այնտեղ... Ի՞նչ սոսկալի հեռապատկեր:

Վերջացնելով մեր ուսումնասիրութիւնը,
պէտք է յիշենք, թէ սիոնիզմն արդէն մեծ յե-
ղաշրջում մը կատարած է մտաւորական մար-
զի մէջ: Հրէական ազգային լեզուն — երբա-

յերէնը — յարութիւն առած է արդէն: Մինչեւ
հիմա Ս. Գրքի եւ Թալմուտի լեզուները կը
նկատուէին լատիներէնի, հին յունարէնի կամ
հայերէն գրարարի պէս մեռեալ լեզուներ եւ
կեանքի մէջ անգործածելի: Սիոնիստները հա-
րատացուցին երբայերէնը կարեւոր նոր բա-
ռերով, եւ այսօր Պաղեստինի բոլոր դպրոցնե-
րուն մէջ գիտութիւններն եւ գրականութիւնը
կ'աւանդուին երբայերէնով. այնտեղի բոլոր
աշակերտները արդէն իրարու հետ երբայերէն
կը խօսին:

1924-ին Զիթենեաց լեռան վրայ հիմնուե-
ցաւ երբայական համալսարանն, եւ անոր ու-
սուցիչները կը յուսան, թէ օր մը անկէ ելնող
աշակերտներն իբր նոր Յիսուսներ պիտի եր-
թան աշխարհի ամէն ժողովուրդներուն նոր ու-
ղիներ ցոյց տալու զէպի երջանկութիւն, զէպի
կատարելութիւն եւ զէպի մշտնջենական խա-
ղազութիւն...:

Կ'ուզէ՞ք մէկ անգամուան գին վճարել եւ մէկ ամբողջ ամիս
ծանուցում տալ

ՂՐԿԵՑԷՔ ԶԵՐ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ

«ՀԱՅՐԵՆԻՔ» ԱՄՍԱԳՐԻՆ

որ հայ ընթերցասէր հասարակութեան սեղանին վրայ կը գտնուի
ու ձեռքէ ձեռք կ'անցնի մէկ ամբողջ ամիս:

Այս առաւելութեան հետ դուք պիտի գտնէք նաեւ ԴԻԻՐԱ-
ՄԱՏՁԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ:

HAIRENIK ASS'N

13-15 Shawmut St.,

Boston, Mass.